



## ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### 12 ԿՐԵՂԻՏԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՄԱՆ ԿԱՐԳ

Ընդունվել է

Գիտական խորհրդի 04.03.2016թ.

թիվ 05 որոշմամբ,

Հաստատվել է

ԵՊԲՀ ռեկտորի

14.03.16 թ. թիվ 24Մ հրամանով,

Ռեկտոր Մ.Զ. Նարիմանյան

1. «12 կրեղիտի սահմաններում ակադեմիական պարտքերի վերահանձման կարգով» (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ուսանողների ակադեմիական պարտքերի վերահանձման կանոնները:

2. Սույն Կարգի իրավական հիմքերն են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 1242-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բուհերում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը» և այլ իրավական ակտեր:

3. Ուսանողներն անբավարար առաջադիմություն ունենալու դեպքում, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունված ուսանողների, իրավունք ունեն մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը՝ առարկաները վերահանձնելով ևս 2 անգամ կամ կրկնելով դրանք՝ Համալսարանի կողմից սահմանված հետևյալ պայմաններով.

ա) Ուսանողները կարող են հաճախել լրացուցիչ դասընթացներին իրենց ցանկությամբ՝ համաձայն ռեկտորին հասցեագրված դիմումի:

բ) Դասընթացը կազմակերպվում է ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի և ուսանողի փոխհամաձայնությամբ:

գ) Դիմումներն ընդունվում և դասընթացները կազմակերպվում են ուստարվա յուրաքանչյուր կիսամյակում ռեկտորի կողմից սահմանված ժամանակացույցով:

Շաբաթվա առաջին դասընթացը կազմակերպվում է շաբաթվա որևէ աշխատանքային օր՝ 7-8-րդ ժամերին, իսկ երկրորդը՝ շաբաթ օրը՝ ժամը 10-11<sup>20</sup>:

դ) Լրացուցիչ դասընթացներին հաճախողներն իրավունք ունեն սահմանված կարգով ստանալու կիսամյակային նոր գնահատական. այդ դեպքում կիսամյակային նախկին գնահատականը չի պահպանվում:

ե) Ուսանողն իրավունք ունի հաճախելու լրացուցիչ դասերին՝ չձևավորելով կիսամյակային նոր գնահատական և պահպանելով նախկինը:

զ) Լրացուցիչ դասընթացի վարձավճարը որոշվում է ռեկտորի կողմից սահմանված կարգով:

4. Դասախոսներին վճարվում է լրացուցիչ դասընթացների համար ուսանողների վճարումների 60 տոկոսը: